
II

ՔՈՒՐԴ ԲԱՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ ՄԵԾ ԵՐԱԽՏԱՎՈՐԸ

(Հաջիե Չնդիի ծննդյան 100-ամյակի առթիվ)

ՍԱՐԳԻՍ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Հաջիե Չնդիի քրդագիտական բազմարդյուն գործունեության մեջ վճռորոշ և առաջնակարգ նշանակություն ունի նրա բանագիտական հարուստ ժառանգությունը, որն սկսվել է, կուտակվել և ձևավորվել 1930-ական թվականների սկզբից, նրա գիտական նախաքայլերից ի վեր:

Յուրաքանչյուր ժողովրդի, առավել ևս իր սեփական գիրն ու գրականությունը չունեցող ազգության հոգևոր մշակույթի համար բացառիկ արժեք ունի նրա բանավոր ավանդությունը, որն իր մեջ է ամփոփել ու խտացրել տվյալ ազգության հազարամյակների պատմության, նյութական ու հոգևոր մշակույթի, կենցաղի, վարքուբարքի, կրոնաճիսական հավատալիքների ընդհանրացրած պատկերը, առասպելաբանաստեղծական մտածողության, էթնիկական մտահայեցությունների, աշխարհընկալման, ազգային իդեոլոգիայի ու ձգտումների հարուստ և բազմաբղետ համայնապատկերը:

Այս իմաստով քրդական բանավոր ավանդությունն իր հարուստ երփնապնակով՝ պատմավիպական, երգային-քնարական, ասութաբանական ժանրերով, ծիսահավատալիքային և կրոնաառասպելական համալիրով Արևելքի ժողովուրդների էթնիկական մշակութային ժառանգության մեջ բացառիկ պատվավոր տեղ է գրավում, իսկ գրից ու գրականությունից գուրկ քուրդ ժողովրդի անցյալի ու ներկայի պատմության և մշակույթի հետազոտման համար ունի առաջնակարգ սկզբնաղբյուրի նշանակություն:

Ահա թե ինչու առավել քան մեկուկես հարյուրամյակ է, ինչ արևելյան ու արևմտյան տարբեր ազգերի պատկանող մասնագետների սևեռուն ուշադրության կենտրոնում է պահված մնում քրդերի մշակութային լավագույն ժառանգությունը՝ նրանց անգուգական բանավոր ավանդությունը: Հայ մտավորականությունը ևս անտարբեր չի մնացել քրդական հարուստ ու ինքնատիպ բանահյուսության նկատմամբ և սկսած Մեծն Արովյանից ու դեռ նրանից էլ առաջ (նկատի ունեւ XVIII դարի մատենագիր Մովսես Տաթևացու քրդական բանահյուսության ձեռագիր հավաքածուն) մինչև Կոմիտաս ու հետնորդները զբաղվել են քուրդ ժողովրդի բանահյուսական և երաժշտական հուշարձանների հավաքմամբ, հետազոտմամբ ու արժեքավորմամբ: Այս նույն նկատառումներով է առաջնորդվել նաև մեծավաստակ Հաջիե Չնդին, որն իր գիտական նախաքայլերն սկսել է իր հարազատ ժողովրդի բանավոր ավանդության նմուշների գրառումով:

1930 թ. Հաջիե Չնդին, բնակվելով և քրդերեն դասավանդելով նախկին Հաջի Խալիլի շրջանի Ղոնդախսազ գյուղում (ներկայիս Արագածոտնի մար-

զի Ռյա թագա գյուղ), սկսում է տեղի քուրդ բնակչությունից գրի առնել բանավոր վիպական ավանդության մի շարք արժեքավոր նմուշներ: Հաջիե Ջնդիի բանահավաքչական այս նախաքայլերը նրա հետագա գիտական ողջ կյանքի ընթացքում դառնում են նախադեպային և կանխանշում նրա գիտական գալիք ճակատագիրը, որն այնքան արգասաբեր եղավ թե՛ հեղինակի և թե՛ մանավանդ խորհրդահայ քրդագիտության հետագա զարգացման համար:



Ձախից աջ՝ Հաջիե Ջնդի, Կարապետ Մելիք-Օհանջանյան, Արամ Ղանալանյան

Հաջիե Ջնդիի այս նախաձեռնության հետևանքն է դառնում, անշուշտ, այն, որ մեկ տարի անց, 1931 թ. աշնանը, երբ Հայաստանի Գուլտուրայի պատմության ինստիտուտը անվանի հայագետ ու արևելագետ, պրոֆեսոր Ասատուր Խաչատրյանի գլխավորությամբ կազմակերպում է քրդական բանահավաքչական անդրանիկ արշավախումբը, նրա մեջ, ի թիվս այլոց («Ռյա թագա» թերթի խմբագիր Ջարդոն Գենջո – Արմենակ Գենջոյան, կոմպոզիտոր Կարո Չաքարյան), ընդգրկվում է նաև Հաջիե Ջնդին: Սա պատմության մեջ առաջին քրդագիտական արշավախումբն էր, որը մեկ ամսից ավելի շրջելով Ապարանի, Թալինի, Էջմիածնի, Աշտարակի եզիդի քրդերով բնակեցված գրեթե բոլոր գյուղերը, գրանցում է զգալի քանակությամբ վիպական, երգային ու երաժշտական բանահյուսության արժեքավոր նմուշներ: 1932 և 1933 թթ. Հ. Ջնդին ընդգրկվում է դարձյալ Գուլտուրայի պատմության ինստիտուտի կազմակերպած բանահավաքչական արշավախմբերում, որոնք արդեն գլխավորում էր անվանի բանագետ ու արևելագետ Կ. Մելիք-Օհանջանյանը: Այդ արշավախմբերին մասնակցում էին նաև երիտասարդ բանագետ, հետագայում Հաջիե Ջնդիի երկար տարիների գործընկեր Արամ Ղանալանյանը և քրդերենին քաջագիտակ, անվանի բանահավաք Շահեն Կուժիկյանը: Արշավախմբերը, այցելելով Աշտարակի և Թալինի շրջանների արևմտահայ գաղթականներով վերաբնակված գյուղերը, արևմտահայ բանասացներից գրառում են հայ և քրդական վիպական ու քնարական բանահյուսության բազմաքանակ նմուշներ:

Ահա այս տարիներից ի վեր, սկսնակ բանահավաք Հ. Ջնդին հայ անվանի և հմուտ մասնագետների ղեկավարությամբ ու հովանավորությամբ հմտանում, մասնագիտանում է բանահավաքչության մեջ և դառնում քրդական բանահյուսության լավագույն բանահավաքը: Բանահավաքչական գործունեությունը հետազայում ևս չի լքում նրան, ընդհակառակը, մասնագիտանալով քրդական բանահյուսության հետազոտման ուղղությամբ, մասնագիտության բերումով իր հետագա կյանքի շուրջ 50 տարիների ընթացքում Հ. Ջնդին պարբերաբար զբաղվում է բանահավաքչությամբ, որն արդյունավորվում է ավելի քան 400 մամուլ բանահյուսական տարածանք ու մեծարժեք նյութի կուտակումով:

Բայց բանահավաքչությունը Հ. Ջնդիի համար լոկ ինքնաբավ նպատակ չէր: Իր գիտական նախաքայլերն սկսելով բանահավաքչական «սնագործ» աշխատանքով և խորամուտ լինելով հարազատ ժողովրդի բանավոր ավանդության բազմաձև խորքերը, որին մեծապես նպաստում է նրա ասպիրանտական մասնագիտական ուսումնառությունը պրոֆ. Ասատուր Խաչատրյանի ղեկավարությամբ, նա մղվում է հարազատ ժողովրդի բանավոր ավանդության հարուստ ժառանգության գիտական համակարգման և հետազոտության:

Իր և գործընկերների կողմից հավաքած բանահյուսական մեծաքանակ նյութերը հետազայում դառնում են փաստագրական այն հիմնական բազան, որի վրա մեկը մյուսի ետևից երևան են գալիս Ջնդիի հեղինակած քրդական բանահյուսության արժեքավոր ժողովածուները, տարբեր ժանրերի համահավաք բնագրերը և բանագիտական հետազոտությունները:

Հ. Ջնդիի բանագիտական բազմամյա գործունեությունն ու թողած վաստակն ընդհանուր առմամբ հատկանշվում են հետևյալ չորս կարևոր խնդիրների հետապնդումով.

1. քրդական բանավոր ավանդության հուշարձանների հավաքում, համակարգում և հրատարակում,
2. քրդական բանահյուսության տարածանք հուշարձանների գիտական համահավաք բնագրերի կազմում և ուսումնասիրում,
3. քրդական բանահյուսության ընտիր նմուշների հայերեն և ռուսերեն թարգմանություններ, վերամշակում ու հրատարակում,
4. հայ և քուրդ ժողովուրդների բանահյուսական փոխառնչությունների հետազոտություն:

Առաջին երկու խնդիրների իրագործումն սկսվում է նրա գիտական առաջին քայլերից իսկ՝ 1930-ական թվականների կեսերից: 1936 թ. Հ. Ջնդին իր գործընկեր, քուրդ ազգագրագետ Ամինե Ավդալի համագործակցությամբ հրատարակում է «Քրդական ֆոլկլոր» բազմաձև սովորածավալ ժողովածուն, որը, ինչպես իրավացիորեն գտնում են, ցարդ մնում է քրդական բանավոր ավանդության լավագույն հանրագիտարանը: Նույն 1936-ին, երաժշտագետ Կարո Ջաքարյանի համագործակցությամբ հրատարակում է «Քրդական ժողովրդական երգեր» խորագրով ժողովածուն, երգերի նոտագրությամբ, որն իբրև քրդական երգային-երաժշտական բանահյուսության արգասիքների հավաքածու՝ առաջինն էր իր տեսակի մեջ: Հետագայում՝

1957-ին և 1988-ին Հ. Ջնդին հրատարակում է բանահյուսական երկու նոր ժողովածու ևս «Քրդական ֆոլկլոր» և «Գարուն» խորագրերով, երկուսն էլ կազմված բանահյուսական նոր նյութերի հիման վրա:

Ասպիրանտական ուսումնառության տարիներին Հ. Ջնդին ձեռնամուխ է լինում քրդական վիպահերոսական բանահյուսության հուշարձաններից մեկի՝ «Կառ ու Քուլուկե Սլեմանե Սլիվի» վիպերգի բանագիտական քննությանն ու արժևորմանը, որը 1940-ին պաշտպանում է իբրև թեկնածուական ատենախոսություն, իսկ 1941-ին հրապարակում առանձին գրքով: Սրանով մեզանում, փաստորեն, սկիզբ է դրվում քրդական վիպական հերոսական ավանդության գիտական ուսումնասիրությանը: Քրդական վիպական բանահյուսության լավագույն նմուշների հրապարակումն ու հետազոտումը, այնուհետև, դառնում են Հ. Ջնդիի բանագիտական ուսումնասիրությունների առանցքային խնդիրներից մեկը: 1950-ական թվականներին նա հայերեն թարգմանությամբ և առանձին գրքերով, առաջաբաններով ու ծանոթագրություններով հրատարակում է «Մամե ու Ջինե» քրդական վիպերգի և «Քյոռոլի» էպոսի քրդական պատումները»: Նույն կերպ նա 1962-ին Մուկվայում ռուսերենով հրատարակում է «Քրդական վիպերգեր» աշխատությունը, իսկ 1977-ին Երևանում քրդերենով հրապարակում է «Ռոստամե Ջալ» էպոսի քրդական պատումները» գիրքը, որին նախորդել էր 1975-ին տպագրած «Ռոստամե Ջալի» քրդական պատումների հարցի շուրջը» արժեքավոր ուսումնասիրությունը: Հարկ է նշել նաև, որ Հ. Ջնդին կազմել ու հրատարակության էր պատրաստել քրդական երկու վիպերգի բնագրեր՝ աստվածաշնչյան թեմաներով՝ «Ուսըվե նավյա» և «Ուսըվե և Ջալիխա» (վերջինս տպագրվեց հետագայում՝ 2003 թ.), ինչպես և մի ընդարձակ ուսումնասիրություն՝ նվիրված քրդական հանրահայտ «Դրմ-դրմ» էպոսին, նրա քրդերեն ու հայերեն տարբերակներին (տպագրված՝ 2005 թ.):

Քրդական վիպական ավանդության հաջորդ բնագավառը, ուր իր մեծագույն լուսնան է ներդրել Հ. Ջնդին՝ ժողովրդական հեքիաթներն են: Քրդական հեքիաթների գրական վերամշակմամբ, զանգվածային ծանուցմամբ, հայերեն, ռուսերեն ու քրդերեն հրատարակմամբ նա տակավին զբաղվել է 1940-ական թվականների սկզբներից: Մակայն երբ 1950-ական թվականների վերջերին սկսվեց հայկական հեքիաթների համահավաք բազմահատոր գիտական հրատարակությունը, Հ. Ջնդին նույն սկզբունքներով նախաձեռնեց քրդական հեքիաթների գիտական համահավաքի կազմումը, որը նա պատվով իրականացրեց 1960–1980-ական թվականների ընթացքում, հրապարակ հանելով քրդական հեքիաթների վեցհատորյա համահավաքը, որն աննախադեպ երևույթ էր քրդագիտության մեջ:

Նույն կերպ նա, դարձյալ հայ բանագիտության բարերար ազդեցությամբ, 1960-ական թվականներից սկսած հավաքում, կազմում և հրատարակության է պատրաստում քրդական ասուրաբանության ամենասիրված ու տարածված ժանրերից մեկի՝ առած-ասացվածքների մեծածավալ երկհատոր գիտական համահավաքը, շուրջ 30 հազար առած-ասացվածքների բնագրերի ընդգրկմամբ, որից ցարդ հրատարակվել է առաջին հատորը (1985 թ.),

իսկ երկրորդը մնում է անտիպ: Այս համահավաքը ևս մեծարժեք ներդրում էր քրդական բանագիտության մեջ:

Եվ, ի վերջո, Հ. Ջնդիի ամենատես հայացքից դուրս չի մնացել նաև քրդական հարուստ քնարական-երգային բանահյուսությունը: Վերն ասվեց, որ նա 1936-ին Կարո Ջաքարյանի հետ հրատարակել էր իրենց հավաքած քրդական ժողովրդական երգերի անդրանիկ ժողովածուն: Քնարական երգերի նկատմամբ Ջնդիի գիտական շահագրգռությունները շարունակվում են հետագայում ևս ու արգասավորվում նորանոր արդյունքներով: 1970-ական թվականներին նա կազմում և հրատարակում է քրդական երգերի երկու նոր արժեքավոր ժողովածու՝ «Քրդական ժողովրդական քնարական երգեր» (1972 թ.) և «Քրդական ժողովրդական երգեր» (1975 թ.) խորագրերով:

Իսկ մինչ այդ, Մեծ հայրենականի տարիներին, երբ հատկապես պետականորեն խրախուսվում ու հովանավորվում էր հայրենասիրական թեմաներով հորինված նորագույն ժողովրդական ստեղծագործությունները, Հ. Ջնդին երաժշտագետ Սամսոն Գասպարյանի հետ կազմում ու հրատարակում է երկու ժողովածու՝ «Հայրենիք» (1942 թ.) և «Հայրենիքի զավակները» (1943 թ.) խորագրերով, ուր ընդգրկված էին քրդական նորագույն շրջանի հերոսական ու քնարական երգերը: Նույն 1942 թ. Արմֆանի «Տեղեկագրում» (հ. 5) Հ. Ջնդին, դարձյալ օրվա հրամայականով պայմանավորված, տպագրում է «Հերոսական և հայրենասիրական մոտիվները քրդական բանահյուսության մեջ» ուշագրավ ուսումնասիրությունը:

Այսպես, տեսնում ենք, որ քրդական թե՛ ավանդական և թե՛ նորօրյա բանահյուսությունն իր գրեթե բոլոր հիմնատեսակներով (վեպ, վիպերգ, հեքիաթ, երգ, առած-ասացվածք) միշտ գտնվել են Հ. Ջնդիի հետազոտական տեսադաշտում, արդյունավորվել գիտական կամ հանրամատչելի արժեքավոր հրապարակումներով և ուսումնասիրություններով: Բայց Հ. Ջնդին քրդական բանահյուսության հրապարակումն ու հետազոտումը չի սահմանափակել սոսկ ազգային շրջանակներում: Լինելով բնիկ հայաստանցի (ծնվել էր Կարսի նահանգում)՝ նա կիսել էր իր հայ եղբայրակիցների միևնույն ճակատագիրը (տեղահանություն, գաղթ, վերաբնակում Խորհրդային Հայաստանում, որբանոցային կյանք Գյումրիում), ստացել էր հայկական կրթություն, երկրորդ մայրենին դարձել էր հայերենը, գիտական դաստիարակությունն ու կուլիվածությունը ձեռք էր բերել հայագիտության բուն օջախներում, ապրել էր ու տառապել հայագիտության նույն հոգսերով, և, հետևաբար, հայերենն ու հայկականը, քրդերենից ու քրդականից հետո Հ. Ջնդիի համար դարձել էր երկրորդ մայրական գիրկ, նույնքան հարազատ ու կենսաբեր: Ուստի, բնավ պատահական չէ, որ նա իր բանագիտական աշխատությունների զգալի մասը գրել է հայերեն, իսկ բանահյուսական բնագրերը թարգմանել է հայերեն և հրատարակել: Այս հանգամանքը պայմանավորված էր ոչ միայն Հ. Ջնդիի հայկական կրթությամբ կամ հայերի նկատմամբ ունեցած երախտագիտությամբ, այլև քրդական բանահյուսության մի հետաքրքիր յուրահատկությամբ: Բանն այն է, որ քրդական վիպական ու քնարական բանահյուսության բազմաթիվ նմուշների բանասացները, ինչպես նաև բանահավաքներից շատերը եղել են հայեր, մասնավորապես

արևմտահայեր: Հայ բանասացները քրդական վիպական բանահյուսական նմուշները պատմել են կա՛մ քրդերեն, կա՛մ հայերեն, իսկ երբեմն էլ, երգային հատվածներով վիպական ստեղծագործությունները՝ երկլեզվյա, պատմողական մասերն ասել են հայերեն, երգային հատվածները՝ քրդերեն: Այդ կերպ գոյացել են վիպական միևնույն ստեղծագործության քրդերեն և հայերեն լեզուներով կամ էլ երկլեզվյա խառն տարբերակներ: Այս երևույթը առկա էր թե՛ անցյալի հայ բանահավաքների (մասնավորապես Մ. Հայկունու և այլոց) գրառումներում և թե՛ իր՝ Հաջիե Չնդիի արևմտահայ գաղթականներից գրառած քրդական բանահյուսության նմուշներում: Այնպես որ, Հ. Չնդիի հայերեն հրատարակած քրդական վիպական բանահյուսության հուշարձանները չի կարելի սուկ թարգմանություն համարել, այլ դրանց մի մասի բնագրերի լեզուն արևմտահայ այս կամ այն բարբառն էր և դրանք, իրավամբ, Հ. Չնդին նույնությամբ զետեղել է քրդերենից հայերեն թարգմանած վիպերգերի շարքում:

Հ. Չնդիի հայերեն հրատարակած բանագիտական աշխատություններից մի քանիսի մասին («Մամե ու Ջինե», «Քոռոզլի» էպոսի քրդական պատումները» և այլն) արդեն խոսք եղավ վերևում: Ավելացնենք նաև, որ նա դրանցից բացի քրդական բանահյուսության մի շարք ժողովածուներ է հրատարակել հայերենով, որոնցից հիշարժան են 1947-ին տպագրած «Քրդական ֆոլկլոր» բազմաժանր ժողովածուն, 1960-ին տպագրած «Քրդական ժողովրդական վիպերգեր» հավաքածուն, տարբեր տարիների (1940, 1952, 1973 թթ.) հրատարակած «Քրդական ժողովրդական հեքիաթներ» խորագրով երեք տարբեր ժողովածուներ, բոլորն էլ իր թարգմանությամբ, առաջաբաններով ու ծանոթագրություններով, իսկ հեքիաթների մեկ ժողովածու էլ հրատարակել է 1985 թ. ռուսերեն: Դրանով Հ. Չնդին մեծ ծառայություններ է մատուցել մի կողմից քրդական ժողովրդական մշակույթին՝ նրա արժեքները լայնորեն պրոպագանդելու առումով, մյուս կողմից հայ, մասամբ նաև ռուս մասնագետներին ու ընթերցող լայն հասարակությանը ծանուցել և իրազեկ է դարձրել քուրդ ժողովրդի հոգևոր մշակույթի արժեքները՝ պարարտ հող ստեղծելով քրդերենին չտիրապետող այլազգի ժողովրդագետների, համեմատաբանական լայն քննությունների համար:

Եվ, ի վերջո, հայ և քուրդ ժողովուրդների բարեկամության ու նրանց բանահյուսության փոխառնչության մասին իր տարիների դիտարկումները և մտորումները Հ. Չնդին ամփոփում է հայերեն գրված «Հայ և քուրդ ժողովուրդների բարեկամության արտացոլումը բանահյուսության մեջ» 1965-ին հրատարակած հիանալի մենագրությամբ, որտեղ պատմական ու բանագիտական միանգամայն ճիշտ մեթոդաբանությամբ քննված են հետևյալ խնդիրները. հայ և քուրդ ժողովուրդների կյանքի ու պայքարի արտացոլումը բանահյուսության մեջ. հայ և քուրդ բանահյուսական ընդհանրություններն ու փոխառությունները, դրանց փոխադարձ տարածումն ու տեղայնացումը երկու ժողովուրդների բանավոր ավանդության մեջ, երկլեզվյա ստեղծագործություններն ու բանասացները, քրդական բանահյուսության գրառումն ու գնահատումը հայ բանահավաք բանասերների և գրական ու մշակութային

գործիչների կողմից, քրդական բանահյուսության մշակումները հայ գրականության մեջ:

Այս մենագրությունն իր գիտական անուրանալի արժանիքներից բացի, քաղաքացիական առումով քուրդ ժողովրդի մեծ վաստակավորի հոգևոր տուրքն էր հայ և քուրդ ժողովուրդների դարավոր անկեղծ բարեկամության ու նրանց էթնիկական մշակույթի խոր ընդհանրությունների նկատմամբ:

Այս առթիվ, թերևս, միանգամայն տեղին է բերել հայ մեծանուն բանաստեղծ Հովհաննես Շիրազի 1958-ին Հաջիե Ջնդիին ձոնած հետևյալ վեցնյակը՝ ուշագրավ բնութագրումներով.

Ազնիվ հոգի է Հաջիե Ջնդին,
Ոսկի կամուրջ է իրենց ու մեր մեջ,–
Քուրդ Աբովյանն է, անմահ է Ջնդին,
Կանթեղ է անունն հավիտյան անշեջ՝
Իմ Արագածի կանթեղի նման,–
Եկ, լույս տանք մինչև Սրմանց ու Սիփան:

Ի մի բերելով Հ. Ջնդիի շուրջ 60-ամյա բանագիտական անխոնջ գործունեության պատմական արժեքի բնութագիրը՝ ամենայն հավաստիությամբ հարկ է արձանագրել, որ Հ. Ջնդիով է սկսվում և հիմնավորվում քրդական հարուստ բանահյուսության պարբերական ու համակարգված հավաքումը, գիտական սիստեմավորումը, հրապարակումը և հետազոտությունը: Նրա անձն ու բանագիտական վիթխարի վաստակն այսօր քրդագիտության համար ձեռք է բերել դասական նշանակություն և սկիզբ դրել բանագիտական ազգային մի դպրոցի, որի շավղով է այսօր ընթանում քուրդ բանագետների նոր սերունդը, անշուշտ, նոր նպատակների և արդիական նոր խնդիրների հետապնդումով: